

«ՆԱԽԱՐԱՐ» ՏԵՐՄԻՆԻ ՄԱՍԻՆ

Ս. Ս. ԿՈՍՏԱՆՅԱՆ

Հայ վաղ միջնադարյան պատմիչների գործերում, ինչպես հայտնի է, բազմաթիվ անգամ հանդիպում ենք «նախարար» տերմինին, որի ծագումը և ստուգաբանությունը զբաղեցրել է շատ հեղինակների:

Ղ. Ինճիճյանը գտնում է, որ «անունս նախարար ինքնին յայտ առնէ ածանցեալ յանուանցս նախ և արար. իբր նախկին ի յարարս, կամ նախակարգեալ իշխան, որպիսի էր և առ յատինս անունս praeiectus, ցուցանելով զյառաջագահութիւն և զնախադասութիւն քան զայլս»¹:

Այդ ստուգաբանությունը ընդունում է Մ. էմինը՝ հորենացու ուսերեն թարգմանության հավելվածում²:

Ն. Մառը, մերժելով այս ստուգաբանությունը, գտնում է, որ «նախարար»-ը իր սկզբնական ձևով պետք է եղած լիներ «նահարար», համապատասխանելով նահապետ և նահանգ բառերին և ապա հ-ն վերածվել է խ-ի: Ըստ նրա, նախարար նշանակում է երկրի շրջանի տեր, գլխավոր³:

Ի. Զավախովը լրիվ ընդունում է Ն. Մառի այս մեկնաբանությունը, զրտնելով, որ «նախարար»-ը ծագում է հին պարսկերենից և բարդ բառ է⁴:

Ն. Ադոնցը ևս ընդունում է Ն. Մառի մեկնությունը և գտնում, որ «նահ» բառը հավանաբար թաքնված է նաև «նախարար»-ի մեջ, որի պարսկերեն ձևը թվում է թե Nahodar-ն է և Ամմիանոս Մարկելինոսի մոտ հիշվում է որպես հատուկ անուն: «Թերևս «նախ» բառի ազդեցությամբ նահարարը դարձել է նախարար: Նշանակությունը ցեղի, տան պահապան, գրեթե նույն ինչ որ նահապետ: Երկուսին փոխարինող զուտ հայկական բառն է տանուտեր»⁵:

Նախարար տերմինի ստուգաբանման Ն. Մառի և Ն. Ադոնցի վերոհիշյալ ենթադրությունները հաստատվել են նաև պրոֆ. Ա. Մեյերի կողմից, սոգդերեն լեզվի օգնությամբ, որի մեջ պահպանվել է nāfīdār բառը «ժողովրդի կամ ցեղի պետ» նշանակությամբ: Նույն բառի պարթևական ձևը ենթադրում է nāfaōarā nāfa «պորտ, ցնդ» և fārā «պետ, գլխավոր»:

Nāfaōarā-ն հայերենում դարձել է «նահարար», սակայն ժողովրդական ստուգաբանությամբ «նահ»-ը վերածվել է «նախ»-ի և ստացվել է նախա-

¹ Ղ. Ինճիճյան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հատ. Թ, Վենետիկ, 1835, էջ 77:

² Տե՛ս Н. Э м и н. История Армении Монсея Хоренского, М., 1893, էջ 298:

³ Տե՛ս Н. М а р р, Этимология двух терминов армянского феодального строя... «Записки Восточн. отд. АН», т. XI, СПб., 1899, էջ 165—174:

⁴ Տե՛ս И. Д ж а в а х о в, Государственный строй древней Грузии и древней Армении, СПб., 1905, էջ 133—135:

⁵ Ն. Ա դ о н ц. Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948, էջ 159:

են նախարարությունը»¹⁰։ Շարունակելով իր միտքը, Հ. Մանանդյանը ենթադրում է, որ հայկական ֆեոդալիզմի ծագումը եղել է «նտխաարտաշեսյան շրջանում», իսկ վերջնական բայքայումը՝ XIV—XV դարերում¹¹։

Հայ հին իրավունքի պատմությունը հետադոտող Խ. Սամուելյանը դրսևում է, որ «հայերի հասարակական կաղմը, սկսած բաղաբական ասպարնզում նրանց երևալու մոմենտից մինչև XVIII դարը, եղել է ֆեոդալական»¹²։ Սակայն նա գտնում է, որ Հայաստանի նախարարական սոցիալ-բաղարական կաղուցվածքը սկսվում է մ. թ. ա. VI դարից և վերջանում է XI դարի կեսերին, երբ բյուղանղացիները տիրեցին Հայաստանին և «վերջ տրվեց նախարարական տոհմերի մնացորդների գոյությունը Հայաստանում»¹³։

Անկախ նրանից, թե ինչպիսի տեղություն է տրվում ֆեոդալիզմին, կամ նախարարական կարգերին Հայաստանում, «նախարար»-ը, որպես սոցիալական ինստիտուտ, հայ պատմագրության մեջ ներկայացվել է «ֆեոդալ»-ի համարժեք, սկսած Ղ. Ինճիճյանից մինչև Ա. Կարի կեսերի հայ պատմաբանները։

Ս. Հակոբյանը ևս անղրաղարձել է «նախարարի»-ի սոցիալական բնորոշմանը և գտնում է, որ «նախարարական-ֆեոդալական հասարակական-տնտեսական ֆորմացիան, որպես հայ ժողովրդի պատմական կյանքի ամենաբնորոշ երևույթներից մեկը, ձևավորվում է ու կաղմակերպվում Արշակունիների օրոք»¹⁴։

Գ. Սարգսյանը գտնում է, որ Ն. Աղոնցը ձիշտ է նշմարել նախարարության գոյության բաղաբական կողմը նրա զարգացման վաղ փուլում, երբ ասում է, որ նրանք սկզբնապես թագավորի կողմից կարգվում էին որպես կաղավարչի և ժաղանղական տիրոջ զուղակցություն, բայց շտապել է նրան տալ նաև սոցիալական, ըստ որում՝ ֆեոդալական գունավորում, որովհետև զասակարգային «հասարակության գոյացման այլ ուղի, քան ֆեոդալացումը նա չգիտեր, գոնև արևելյան երկրների համար»¹⁵։

Հեղինակը գտնում է, որ «հին Հայաստանում թագավորական և նախարարական հողատիրության ինստիտուտի զարգացումը այն ֆոնն է, որի վրա հստակ կերպով ուրվագծվում է և՛ տերիտորիալ միավորների, և՛ նրանց կաղավարչների՝ նախարարների իսկական բնույթը»¹⁶։

Ա. Փերիխանյանը ևս գտնում է, որ նախարարությունը պետական կաղավարման հնագույն ինստիտուտներից է, որը զարգացման երկար ուղի է անցել։ Սկզբում նախարար կոչվել են թագավորի կողմից նշանակված նահանգների կաղավարչները, իսկ նրանց ֆեոդալացումը բացատրում է հետևյալ կերպ. սկզբում նախարարին նվիրվում էր մի գյուղի տուրքերի հավաքումը։ Այդ նվիրատվությունը լինում էր որևէ ժաղայության փոխարեն և քա-

10 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 32։

11 Նույն տեղում, էջ 257։

12 Խ. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հատ. 1, Երևան, 1939, էջ 101։

13 Նույն տեղում, էջ 102 և 134։

14 Ս. Կ. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, հատ. 1, Երևան, 1957, էջ 127—128։

15 Տե՛ս Գ. Խ. Սարգսյան, նշվ. աղյ., էջ 9։

16 Նույն տեղում։

նի որ տուրքերի հավաքումը վերևից հսկողության տակ չէր, ապա այն աստիճանաբար վերածվեց հողային տիրույթի»¹⁷։

Ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանը խոսելով «նախարար» հասկացողության մասին, գտնում է, որ «սկզբնական շրջանում այն ունեցել է վարչական իմաստ և ոչ թե ցեղային կամ տոհմական։ Սկզբում նախարար էին կոչվում թագավորի կողմից նշանակվող գավառների կառավարիչները՝ «գաւառակալ»-ները, սակայն ժամանակի ընթացքում նախարարի պաշտոնը դառնում է նրա տոհմի ժառանգական արտոնությունը, իսկ նրա կողմից կառավարվող տերիտորիան՝ դավառը, նրա տոհմի ժառանգական սեփականությունը»¹⁸։ Շարունակելով իր միտքը վարչական միավորների՝ ժառանգական տիրույթների վերածվելու տենդենցի մասին, նա գրում է. «Սկզբում ժառանգական էր միայն նախարարի պաշտոնը տվյալ դավառում, սակայն ժամանակի ընթացքում ժառանգական է դառնում նաև ամբողջ տերիտորիան. ապա նաև նրա վրա նստած գյուղական համայնքները՝ «շէն»-ները, շինականներով հանդերձ»¹⁹։

Մյուս բոլոր ուսումնասիրողները «նախարար»-ի մեջ մինչև այժմ շեշտել են նրա միայն ֆեոդալական շրջանի նկարագիրը, ելնելով ուշ շրջանի՝ V դարի հայ մատենագրության ընձեռած տվյալներից, կամ էլ այդ տվյալներից արված երրակացությունները տարածել են ավելի վաղ շրջանի «նախարար»-ի վրա։

Ն. Ադոնցը գտնում է, որ մեզ համար մատչելի գրական նյութը, նախարարական կարգերի վերաբերյալ, մեզ լրիվ պատկերացում չի տալիս և նախարարությունը նմանեցնում է հին ժառի, որը լավագույն դեպքում մեր առաջ բացում է տերևները և վերևի մասը, իսկ արմատը ծածկված է մեղանից. որպեսզի հասնենք արմատներին, պետք է փորել հողը»²⁰։

Այդ արմատներին հասնելու համար մեր պատմիչների հաղորդած պատմական տվյալները բավականաչափ նյութ չեն տալիս, քանի որ ցուցադրում են հիմնականում IV—V դարերի իրավիճակը։ Ուստի դիմում ենք տերմինաբանական հետազոտման այն ճանապարհին, որը մեզ ընձեռում է առաջին հերթին հայ թարգմանական մտքի ամենավաղ արգասիք հանդիսացող «Թագուհի թարգմանությունը»՝ Աստվածաշունչը։

* * *

Հայերեն Աստվածաշունչում «նախարար» տերմինի կիրառման դեպքերը համեմատելով նրա բնագիրը հանդիսացող հունական «Յոթանասնիցի» (Սեպտուագինտայի) համապատասխան տեղերի հետ, ստանում ենք հետևյալ պատկերը (տե՛ս աղյուսակը)։

Սույն աղյուսակում ներկայացված է, նախ, թե «նախարար» տերմինը «Յոթանասնիցի» ո՞ր հունարեն տերմինի թարգմանության համար է կիրառվել (ուղղահայաց աղյուսակ № 1) և ապա՝ թե այդ հունարեն տերմինները ուրիշ ինչ տերմիններով են թարգմանվել հայերեն Աստվածաշունչում (մնացած բոլոր սյունակները)։

17 А. Г. Периханян. — *Եզդ. աշխ.*, էջ 51։

18 «Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1971, հատ. 1, էջ 842—843։

19 Նույն տեղում, էջ 843։ Տե՛ս նաև «Очерки истории СССР. III—IX вв.», М., 1958, էջ 167—185։

20 Н. Адонц. Армения в эпоху Юстиняна, СПб., 1908, էջ 372—373։

Λαμπρόν Σοφιστήν	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22
	Δωδ. μαθητ.	αρχ. ζήλ.	Δ. ρ.	μαρ.	αρχ. μαρ.	Δ. μαρ. ζήλ.	Δ. μαρ. ζήλ.	αρχ. μαρ. ζήλ.	Δ. μαρ. ζήλ.	Δ. μαρ. ζήλ.	αρχ. μαρ. ζήλ.	Δ. μαρ. ζήλ.	αρχ. μαρ. ζήλ.	Δ. μαρ. ζήλ.	αρχ. μαρ. ζήλ.	Δ. μαρ. ζήλ.	αρχ. μαρ. ζήλ.	Δ. μαρ. ζήλ.	αρχ. μαρ. ζήλ.	Δ. μαρ. ζήλ.	αρχ. μαρ. ζήλ.	Δ. μαρ. ζήλ.
1. Σατραπης	32	2										1										35
2. αρχων	6	630 ¹	1	2	1	2	1	1	3	2	1									2	8	660
3. βουλευτής	2												3									5
4. στρατηγός	2	7								18				1	10	23					5	66
5. μεγιστάνες	1	3							38								1	1	1		2	47
Σύνολο	43	642	1	2	1	2	1	1	41	20	1	1	3	1	10	23	1	1	1	2	15	813

¹ Βλ. σελ. 10. Σωφιστὴς

Պարզելու համար, թե արդյոք հունարեն տերմիններից ո՞րն է հանդիսացել «նախարար»-ի բուն համարժեքը, դիմենք վերլուծության, ըստ աղյուսակում ստացված խմբավորումների:

1. Նախարար — *πατριάρχης*. Նախարար բառի կիրառման ընդամենը 43 դեպքից 32 անգամ թարգմանիչներն այն օգտագործել են *πατριάρχης* տերմինը թարգմանելու համար: Բացի *πατριάρχης*-ի այդ 32 հիշատակումներից «Յոթնասնիցում» այն հանդիպում է ևս երեք անգամ, որոնցից երկուսը հայերը թարգմանել են «իշխան» և մեկը՝ «կուսակալ»:

Կարելի է եզրակացնել, ուրեմն, որ *πατριάρχης*-ի հայերեն բուն համարժեք է համարվել «նախարար»-ը:

Արդ, ի՞նչ է նշանակում *πατριάρχης*-ը «Յոթնասնիցում» և, հետևաբար, ի՞նչ իմաստով պիտի հասկանալ «նախարար»-ը նրա հայերեն թարգմանության մեջ:

Այս հարցի պատասխանը մասամբ կանխորոշվում է այն իմաստով, որ ունեցել է *πατριάρχης* տերմինը «Յոթնասնիցի» ստեղծման (այսինքն՝ նրա եբրայերեն բնագրից թարգմանության) ժամանակաշրջանում մ. թ. ա. III դարում: Այդ ժամանակ այն անվերապահորեն նշանակել է տվյալ երկրամասի վրա կարգված վարչական պաշտոնյա, նահանգապետ, մարդի կառավարիչ: «Յոթնասնիցի» համապատասխան կոնտեքստները՝ ինչպես և նրանց հայերեն թարգմանությունները լրիվ հաստատում են, որ *πατριάρχης*-ը այստեղ հենց այդ իմաստով է օգտագործված: Որոշ կոնտեքստներում այդ իմաստը առավել ցցուն է արտահայտված, մյուսներում՝ պակաս ցցուն:

Այսպես, Դանիել, 2, 1-ում կարդում ենք. «Եւ հաճոյ թուեցաւ առաջի Դաւեհի, և կացոյց ի վերայ թագաւորութեան նախարարս հարեւր և քսան», կամ Գ թագ., Ի, 24. «Ի բաց արա թագաւորսն իւրաքանչիւր տեղւոշէ, և դիր ընդ նոսա նախաբարս», և կամ. «Եւ կացոյց զնա ի վերայ աշխարհին բաբելացոց. և իշխան նախարարացն...» (Դանիել, Բ, 48):

Բավականաչափ հստակ են և այն բաղմամբիւ կոնտեքստները²¹, որտեղ *πατριάρχης*- նախարարը հիշատակվում է թվարկման մեջ, ուրիշ նմանօրինակ տերմինների կողքին: Օրինակ, Ա Նվբ, Գ, 2-ը. «Եւ դամենայն նախարարս և զզօրագլուխս, և զտեղակալս...» և կամ՝ Դանիել, Գ, 94. «Եւ ժողովեցան նախարարք և կուսակալք և զօրավարքն և զօրաւորք թագաւորին...»: Այստեղ հանդիպող զօրագլուխները, տեղակալները, կուսակալները և այլն, ինչպես և այդ խմբի մյուս կոնտեքստներում հիշատակվող «հրամանատարքն», «զաւառապետքն», «սպարապետքն» (բացի ավելի անորոշ «իշխան»-ից) աներկբայելիորեն նշանակովի բաղմամբ-վարչական պաշտոնյաներ են և ընդգծում են նրանց կողքին հիշատակվող «նախարարներ»-ի նմանօրինակ բնույթը: Կոնտեքստների երրորդ խումբը²² ավելի անորոշ է և տալիս է ընդհանուր «զեկավար», «առաջնորդ» իմաստը, սակայն դեպքերից և ոչ մեկում որևէ չափով չի հակադրվում առաջին երկու խմբում ի հայտ եկող նշանակովի պաշտոնյայի իմաստին: Որպես նմուշ բերենք հետևյալ կոնտեքստը. «Եւ առաքեցին և ժողովեցին զամենայն նախարարս ալլաղգեացն, և ասեն...» (Ա թագ., Ե, 11):

21 Ա Նվբ, Գ, 2, 14. Դ, 47, 49: Դանիել, Գ, 94. 2, 4, 6, 7: Յուդիթ, Ե, 2:

22 Ա թագ., Ե, 8, 11. 2, 4, 12, 16. Է, 7. Իթ, 2, 3, 6, 7, 9: Դատ., Գ, 3. Ե, 3: Գ թագ., Ժ, 15: Եսթեր, Ժ2, 1:

Նույնը կարելի է կրկնել կոնտեքստների ևս մի խմբի մասին, ուր «նախարար»-ը հանդես է դալիս որևէ ավելի հզոր անձի ստորադրյալ²³, Օրինակ. «Զի իշխանքն որ ՚ի վերայ նախարարացն նոցայ կացեալ էին...» (Նսթեր, Թ, 3):

Դիտարկելով «նախարար»-ի և նրա հիմնական համարժեքը հանդիսացող յաշխարհ-ի խնդիրը, դառնանք այժմ մյուս, շատ ավելի սակավաթիվ համապատասխանողներին, քննելով դրանք ըստ քանակական նվազման:

2. Նախարար- չոյլոյ. ընդհանրապես «Յոթանասնիցի» չոյլոյ-ի համարժեքը հայերեն թարգմանության մեջ «իշխան»-ն է, քանի որ չոյլոյ-ի օգտագործման 652²⁴ դեպքերից 630-ում այն թարգմանվել է «իշխան»:²⁵ Արջոյ-ը «նախարար» է թարգմանվում ընդամենը 6 անգամ և խիստ հատկանշական է, մի կողմից, որ բոլոր 6 դեպքերն էլ կապված են միևնույն Դատավորաց գրքի Ժ2 գլխի հետ և, մյուս կողմից, որ այդ գլխում չոյլոյ-ը ընդամենը 7 անգամ է հիշատակված (որոնցից միայն մեկը թարգմանված է «իշխան»):

Ուրեմն կտրուկ հակասություն կա չոյլոյ տերմինի հայերեն թարգմանության մեջ ողջ Աստվածաշնչի (ներառյալ նաև Դատավորաց գրքի մյուս գլուխները) և Դատավորաց Ժ2 գլխի միջև: Այդ գլխի թարգմանիչը ինչ-ինչ պատճառներով լքեց չոյլոյ-ի սովորական համարժեքը՝ «իշխանը» և դիմել «նախարար»-ին, որը սովորաբար յաշխարհ-ի համարժեքն է: Ուրիշ թարգմանիչ է եղել դա, թե՞ այդպես վարվելու համար եղել են որոշիչ դրգապատճառներ, առայժմ դժվար է ասել:

Դրդապատճառների մասին կարելի է այսպիսի ենթադրություններ անել:

Դատավորաց Ժ2 գլխի ամբողջովին նվիրված է Սամսոնի և Դալիլայի պատմությանը, որտեղ այլազգիները կաշառելով համոզեցին Դալիլային, որ դավաճանի Սամսոնին: Ահա վերոհիշյալ այլազգի կաշառատուներին է, որ թարգմանիչը համառորեն անվանում է «նախարար»:

Այստեղից եղբակացնում ենք. ա) որ գուցե այս կոնտեքստները աղերսվում են Ա Քաղավորությանց գրքերում կենտրոնացած այն կոնտեքստների հետ, որտեղ յաշխարհ-ի կայուն համարժեքը հանդիսացող «նախարար»-ը հաճախ տրվում է սոցիալական բարձր դասի հատկապես այլազգի ներկայացուցիչներին²⁵. բ) թերևս կարելի է ենթադրել, որ Դատավորաց Ժ2 գլխի թարգմանիչը ուրիշ անձնավորություն է, ոքը «նախարար» տերմինի վերաբերյալ այլ հասկացություն է ունեցել:

Եթե մեր այս բացատրությունը ճիշտ լինի, ասլա կարելի է ասել, որ վերոհիշյալ 6 չոյլոյ-ի համարժեքը «նախարար»-ը ոչ այլ ինչ է, բայց եթե չոյլոյ-ի ճիշտ համարժեքը հանդիսացող «իշխան»-ի տարբերակը՝ օգտագործված թարգմանի կողմից ըստ իր ձաշակի և այդ հասկացության իմաստավորման յուրահատուկ ընկալման:

3. Նախարար- ջոյնէյոյլ «Յոթանասնիցում» տվյալ տերմինը օգտագործվել է 5 անգամ, որոնցից երեքը Հին Կտակարանում են և թարգմանվել

²³ Դանիել, 2, 2: Ա Թագ., 2, 18: Նսթեր, Ա, 3, 9, Թ, 3:

²⁴ Ընդամենը 660 դեպք, բայց դրանցից 8-ը ընդհանրապես արտահայտված չեն հայերեն թարգմանության մեջ:

²⁵ Ա Թագ., 9, 3. Ե, 8, 11. 2, 4, 12, 16, 18. է, 7. ԻԹ. 2, 3, 4, 7, 9:

են «խորհրդական», իսկ երկուսը նոր Կտակարանում, որոնց այլ թարգմանություն ստանալը հետևյալ կերպ ենք բացատրում:

Նոր Կտակարանում հիշվող Հովսեփի Հարեմաթացին, որն իր «կոածոյ» գերեզմանը հատկացրել է Հիսուսի թաղման համար, երկու անգամ հունարեն տեքստում կոչվել է *βουλαετης* և հայերենում թարգմանվել է «նախարար»:

Մեր կարծիքով, նոր Կտակարանի թարգմանիչը Հովսեփի Հարեմաթացուն տվել է «նախարար» տիտղոսը, որովհետև վերոհիշյալ երկու կոնտեքստներից մեկում հետևյալն է ասված. «Καὶ ὁμοῦ ἀνέβη ὁ νόμος Ἰωσήφ βουλαετης ὑπαρχων, καὶ ἀνέβη ἀρχιδιόκας καὶ ὁ καλὸς»²⁶:

Այստեղից *βουλαετης*-ը հայերենում ստացել է «նախարար» համարժեքը:

Մարկոս Ժե, 43-ում նույն մարդու կապակցությամբ գործածված *βουλαετης*-ը թարգմանիչը նույնպես թարգմանել է «նախարար» և ոչ «խորհրդական», ըստ երևույթին չկարողանալով նահանջել Հարեմաթացուն մեկ անգամ արդեն տրված «նախարար» տիտղոսից:

4. Նախարար- *επαρχος*. Աստվածաշնչում, *επαρχος*-ը որպես «նախարար» թարգմանվել է երկու անգամ, այն էլ միայն Ա Թագավորությանց Իթ գլխի 3-րդ և 4-րդ իրար հաջորդող պարագրաֆներում, իսկ մնացյալ շուրջ 60 օրինակներում թարգմանիչը դրել է այլ համարժեք (տե՛ս աղյուսակը):

Թվում է, թե այնուամենայնիվ «ստրատեգոս»-ի «նախարար» թարգմանությունը պատահականության արդյունք չէ, այլ *επαρχος* և *επαρχος* տերմինների սերտ մերձություն:

Հելլենիստական շրջանում այդ երկու տերմինները հաճախ փոխարինում են իրար, երկուսն էլ նշանակելով «մարդի կառավարիչ»: Ստրաբոնը, Արտաշեսին և Ջարեհին *επαρχος* է անվանում միևնույն նրանց թագավոր դառնալը²⁷:

Հայ իրականության մեջ ընդունված է եղել նաև «ստրատեգիա» հասկացությունը վարչական միավորի, մարդի իմաստով²⁸:

Այս բոլորը, հավանաբար, թույլ է տվել թարգմանիչին իրար այնքան մոտ գտնվող տարբեր բառերին տալ մեկ՝ «նախարար» համարժեք, ելնելով նաև, թերևս, այդ երկու տերմինների իմաստավորման երբեմնի նույնացումից:

5. Մարկոս Զ, 21-ում *μεγισταν* թարգմանվել է որպես «նախարար»:

Թերևս սա սովորական խոստորում է, որ կյանքի է կոչված տերմինների իմաստալից մերձությամբ: Սակայն չպետք է մոռանալ նաև այն, որ Տակիտոսը հայ ավագանուն կոչել է *megistanes*: Ըստ նրա, հռոմեացիների կողմից հայերին ներկայացվում է «...ահաբեկիչ առաջարկ-պայման՝ որ հայերի մեծամեծներին (*megistanas*), որոնք առաջինը մեղանից անջատվեցին, տեղահան է անում, նրանց ամբողջությունները քանդում, հավասար ահ է ազդում թե՛ հարի, և թե՛ լեռնային մասերին, թե՛ ուժեղներին, և թե՛ թույլերին»²⁹:

Աստվածաշնչում «նախարար» տերմինի օգտագործման բնույթի մասին վերը նշվածը հանրագումարի բերելով, համոզվում ենք, որ այստեղ նրա հիմ-

26 «Եւ ահա այր մի, անուն Յովսէփ, որ էր նախարար այր բարեկործ և արդար» (Լուկաս, ԻԳ, 50):

27 *Strabo*, XI, 14, 5 և 15:

28 *Plin.*, NH, VI, 9:

29 *Strabo* Տակիտոս, XXVII, հայերեն թարգմանություն Պ. Սոտնիկյանի, Երևան, 1941, էջ 124—125:

նական իշխող իմաստն է՝ «նահանգապետը», «մարդի կառավարիչը» և բոլորովին բացակայում է «ֆեոդալ» իմաստը: Եվ դա միանգամայն բնական է, քանի որ Աստվածաշունչը, նախաֆեոդալական շրջանի կոթող լինելով, չէր էլ կարող տալ այդպիսի իմաստ:

Դառնանք այժմ V դարի հայ պատմիչների դրական երկերին: Անվիճելի է, որ այստեղ «նախարար»-ի իշխող իմաստն է «ֆեոդալ»-ը, որովհետև հարյուրավոր անգամ հանդիպում ենք «նախարար»-ի այդ առումին: Բայց և այնպես փնտրելու դեպքում կարելի է հանդիպել և այնպիսի դեպքերի, որոնք կարող են զուգահեռներ ծառայել «նախարար»-ի Աստվածաշունչում ի հայտ եկող իմաստին:

Այն, որ «սատրապ»-ը երբեմն նույնն է եղել, ինչ «նախարար»-ը, գալիս է հաստատելու նաև հայ պատմիչներից Փավստոսը, որը նույնացնում է այդ երկուսը. «Եւ մեծասքանչելաշուք յուղարկեցին զնա, նույնպես և զմեծամեծ նախարարսն սատրապն Հայոց»³⁰ և կամ՝ «...ամենայն սատրապը նախարարք և աղատք...»³¹:

Խոսելով ներսես կաթողիկոսի և հայ նախարարների Բյուզանդիա ուղարկվելու մասին, տեքստի շարունակությունում նույն նախարարներին անվանում է «սատրապ»³², արդեն ավելորդ համարելով երկու հոմանիշները միասին օգտագործել:

Ազաթանգեղոսի մոտ մեզ հետաքրքրում է այն հատվածը, որտեղ հայոց Տրդատ թագավորը, քրիստոնեություն ընդունելու կապակցությամբ իր մոտ «զումարեաց զգլխաւորս նախարարացն և զկուսակալս աշխարհացն»³³, որտեղ մեկ առ մեկ իմաստով է, թե ովքեր էին այդ «գլխավոր» նախարարները: Դրանց մեջ է նաև «Իշխան շահապ Զարաւանդ և Հեր գաւառի»:

«Շահապ»-ը, ինչպես հայտնի է, «սատրապ»-ի հայկական համաթեքն է³⁴: և նշանակում է հենց «կառավարիչ»: Մխիթար Գոշի կողմից հիշվում է «շահապ քաղաքին Տրիխեաց»³⁵, որը, ինչպես նույն հեղինակի կողմից շեշտվում է, եղել է Տիգրիսի «բաղաբապետ»³⁶: Բնական է, որ նա չէր կարող մայրաքաղաքի տերը եղած լինել:

Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» մեջ հատկապես հետաքրքրաբերական է «նախարար» տերմինի օգտագործումը շատ լայն իմաստով: Նա նախաբար է անվանում Հայկ նահապետին³⁷, Պարույր թագավորին³⁸, նախքան սրա թագավորելը: Պարզ է, որ սրանք դուրս են գալիս, «նախարար»-ի «ֆեոդալ» ըմբռնման սահմաններից: Հետաքրքրական է «նախաբարք քաղաքին» արտահայտությունը, որտեղ խոսքը վերաբերում է վրացական Մցխեթ

³⁰ Փավստոսի Բուզանդացու Պատմություն Հայոց», Վենետիկ, 1832, էջ 73:

³¹ Նույն տեղում, էջ 67:

³² Նույն տեղում, էջ 79:

³³ «Ազաթանգեղայ Պատմություն Հայոց», Տիգրիս, 1909, էջ 414:

³⁴ «Շահապ» բառը առաջ է եկել հին պարսկերեն «խշաթրապափան», հունարեն տառադարձությամբ Ψατραπετης (սատրապ) բառից, որը այլ սոցիալական իմաստ է ստացել հետագայում:

³⁵ Տե՛ս Ղ. Ալիշան, Հայագատում, Վենետիկ, 1901, էջ 389:

³⁶ Նույն տեղում, էջ 389:

³⁷ «Մովսեսի Խորենացու Պատմություն Հայոց», Տիգրիս, 1913, էջ 34:

³⁸ Նույն տեղում, էջ 68:

քաղաքի ղեկավարներին, որոնք քրիստոնեությունը ընդունեցին նունեից³⁹։ Սա բնականաբար պետք է նշանակի «քաղաքի կառավարիչներ», բայց ոչ երբեք քաղաքի ֆեոդալական տերեր։

Այս բոլորը նշանակում է, որ «նախարար» տերմինը իր «կառավարիչ» նշանակությունը ազոտ կերպով պահպանել է նաև V դարի հայ սլաոմագրություն մեջ։

Այսպիսով, քննարկվող բոլոր նյութերը թույլ են տալիս հանգելու հետևյալ եզրակացությունների։

ա) «նախարար»-ը Աստվածաշնչի թարգմանության մեջ համապատասխանում է $\alpha\chi\alpha\rho\alpha\tau\eta\zeta$ -ին և ունի «կառավարիչ», «նահանգապետի» իմաստ։ Մնացած համապատասխանությունները չեն հակասում այդ իմաստին և տալիս են միայն նրա որոշ երանգավորումները։

բ) «նախարար»-ի «կառավարիչ» իմաստը ինչ որ չափով ի հայտ է գալիս նաև V դարի հայ մատենագիրների մոտ։

գ) V դարում «նախարար» տերմինի կիրառման այսպիսի պատկերը գալիս է Հայաստանի հողի վրա նրա պատմական զարգացման ընթացքից։ Սկզբնապես նշանակելով միմիայն «կառավարիչ», «նահանգապետ», այդ տերմինը ֆեոդալիզմի զարգացմանը համընթաց հետզհետե ձեռք է բերել նաև «հողատեր իշխանի», «ֆեոդալի» իմաստ, որը արդեն IV—V դարերում դարձել է տիրապետող։

О ТЕРМИНЕ «НАХАРАР»

С. С. КОСТЯНЯН

(Резюме)

Изучение всех случаев употребления термина «нахарар» в армянском переводе Библии в сопоставлении их с соответствующими местами греческой Септуагинты приводит к заключению, что исконным эквивалентом термина «нахарар» в Септуагинте является термин $\alpha\chi\alpha\rho\alpha\tau\eta\zeta$.

Исследование приводит к следующим выводам:

а) в армянском переводе Библии термин «нахарар» имеет исключительно значение «правитель», «областенаачальник»;

б) это же значение термина «нахарар» в отдельных случаях встречается и у армянских историков V в;

в) термин «нахарар» первоначально имел в армянском языке только значение «правитель»; «областенаачальник»; параллельно с развитием феодализма в Армении он постепенно приобретает значение «феодал», «князь», которое и является преобладающим в IV—V вв.

³⁹ նույն տեղում, էջ 233։